Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Չեխիայի Հանրապետություն, ք. Պրահա, 12-15 սեպտեմբերի, 2022 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հետազոտական տարածքի և նորարարության հանձնաժողովի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպական հետազոտական տարածքի և նորարարության հանձնաժողովի ասոցացված անդամների հանդիպում-միջոցառմանը

6. Քննարկված թեմաները

- Եվրոպական հետազոտական տարածքի և նորարարության հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը և իրականացվող ծրագրերը,
- Եվրոպական հետազոտական տարածքի 2022-2024 թթ. գործողությունների ծրագիրը,
- ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի միջանկյալ հաշվետվությունները:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Ս. Հայոցյանը ներկայացրել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվող ՀՀ գիտական համայնքի եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված ծրագրերը, ինչպես նաև ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Ս. Հայոցյանը հանդիպում է ունեցել Խորվաթիայի կրթության և գիտության նախարարության գիտության և տեխնոլոգիաների տնօրենության ղեկավար Հրվոյե Մեշտրիկի հետ, քննարկվել են գիտության ոլորտի բարեփոխումներին և խոշոր բուհական համակարգերում կառավարման խնդիրներին վերաբերող հարցեր:

Քննարկում է եղել Լատվիայի կրթության և գիտության նախարարության փորձագետ Էդվարդս Ֆրանսիս Կուկսի և նույն նախարարության բարձրագույն կրթության,

գիտության և նորարարության վարչության ներկայացուցիչ Լաումա Սիկայի հետ: Վերջինիս հետ քննարկվել են գիտական կազմակերպությունների գնահատման մեթոդները և լատվիական կողմի փորձն այդ ոլորտում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Խորվաթիայի գործընկերոջ հետ ձեռք են բերվել խոշոր բուհական համակարգերում և գիտության ոլորտի կառավարմանն առնչվող հարցերում փորձի փոխանակման պայմանավորվածություններ: Լատվիայի գործընկերների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն գիտական կազմակերպությունների կատարողականի գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մոդելի ներդրման հարցում համագործակցելու մասին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Եվրոպական հետազոտական տարածքի և նորարարության հանձնաժողովի նիստում որոշումներ չեն կայացվել: Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ մասնակից պետությունների ներկայացուցիչները ներկայացրել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի կառնվեն հանձնաժողովի կողմից իրականացվող ծրագրերում:

Լատվիայի և Խորվաթիայի ներկայացուցիչների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ աշխատանքային կարգով շփումները շարունակելու մասին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

19.09.2022թ.